Ներկայացվում է յուրաքանչյուր ամիս մինչև հաջորդող ամսվա 5-ը

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և մարմնի ղեկավարի կողմից կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2018 թվականի մարտ ամսվա ընթացքում քաղաքացիներից ստացվել է թվով 22 առաջարկություն, դիմում և բողոք, որից 9- ը վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից.

Դիմումներն ըստ բնույթի	Ընդամենը	Պատաս-խանվել է	որից			Ծանոթություն
			Տրվել է դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	
Արտերկրից ներկրված տոհմային երինջներ հատկացնելու, տարաժամկետ վճարման պայմանով երինջների ձեռքբերման պայմանագրում անվանափոխություն կատարելու և պայմանագրերը վերանայելու մասին	2	2			2	1 դիմումատուի պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թվականներին տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում եվրոպական երկրներից Հայաստանի Հանրապետություն ներկրված տոհմային երինջների բաշխման գործընթացն ավարտվել է: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ նրա դիմումը վերցված է հաշվառման և տավարաբուծության զարգացման նոր ծրագիր իրականացնելու դեպքում՝ երինջների բաշխման հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացության հիման վրա

						տարաժամկետ վճարման պայ-մանով նրան կտրամադրվեն տոհմային երինջներ: 1 դիմումատուի պարզաբանվել է , որ ՀՀ գյուղատնտեսության նա-խարարության և նրա միջև 2012 թվականի ապրիլի 18-ին կնքված թիվ ՀՀԳՆ-ԵՏՎ-ԱԱՎ-87 պայմա-նագրի գործողության ժամկետը 2016 թվականի ապրիլի 11-ին լրացել է և նշված պայմանագրով սահմանված պարտավորություն-ները նրա կողմից ամբողջութ-յամբ չկատարելու հիմքով՝ գու-մարի բռնագանձման պահանջով ՀՀ գյուղատնտեսության նախա-րարությունը դիմել է դատարան և ներկայումս գործը գտնվում է հարկադիր կատարման վարույ-թում: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ Արշակ Սահակ-յանի կողմից պայմանագրերով նախատեսված պարտավորութ-յուններն ամբողջությամբ չկատա-րելու հիմքով՝ ՀՀ գյուղատնտե-սության նախարարությունը նույն-պես գումարի բռնագանձման պահանջով դիմել է դատարան և կայացված դատական ակտերի հիման վրա Արշակ Սահակյանի գործը գտնվում է սնանկության վարույթում:

Գյուղատնտեսության տարբեր ոլորտների գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	3	3	3			
ՀՀ գյուղատնտեսության նախարարի մոտ ընդունելության համար հերթագրելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, նրա ընդունելությունը նշանակվել է ՀՀ գյուղանտեսության նախարության աշխատակազմի ղեկավարի մոտ 2018 թվականի մարտի 29-ին՝ ժամը 11:00-ին:
Անկած խոզերի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
«Լալվարի» անտառատնտեսության տարածքում ապօրինի ծառահատումների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Հիվանդ խոշոր եղջերավոր կենդանու անկման դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Գյուղատնտեսության ոլորտում կոլեկտիվ տնտեսություն հիմնելու վերաբերյալ պարզաբանում ներկայացնելու մասին	1	1	1			

«Հենասյուններով խաղողի այգու նորատիպ հատակագիծ մեքենայով թաղելու և բացելու համար» նորարարական առաջարկի իրականացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Այրիջա գետի հունը բարձրացնելու նպատակով միջոցներ ձեռնարկելու մասին	1	1	1			
Արտադրական պրակտիկան անհատույց «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում անցկացնելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	22	14	6		8	8 դիմում ընթացքի մեջ է:
Որից՝ ՀՀ կառավարության աշխատակազմից վերահասցեագրված						
Նոյեմբերյան քաղաքի անասնաբուժարանի շենքը որպես սպանդանոց վերակառուցումը և շահագործումն արգելելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ նրա և համադիմումատուների կողմից իրականացված անկանոն կառուցապատման արդյունքում չի պահպանվել սանիտարապաշտպանիչ գոտին, որի արդյունքում հարակից երկու տները գտնվում են քննարկվող տարածքի սանիտա-

						ռապաշտպանիչ գոտու տարածքում: Տվյալ պարագայում սպանդանոցների և անասնաբուժարանի համար նախատեսված սանիտարապաշտպանիչ գոտիների նորմերը նույն են և դրանք խախտվել են բնակիչների, այլ ոչ թե ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ նշված հասցեում սպանդանոցի նախագծային փաստաթղթերի կազմման փուլում պարզվել է, որ տեղանքի բարդ ռելիեֆի հետևանքով կառուցապատողի համար տնտեսապես շահավետ չէ քննարկվող տարածքում սպանդանոցի կառուցումը և ներկայումս վերջինս տեղական ինքնակառավարման մարմինների հետ քննարկում է հարակից Բերդավան համայնքում սպանդանոց կառուցելու հարցը:
Վարդի մշակություն և եթերային յուղերի արտադրություն կազմակերպելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հետաքրքրված է հանրապետությունում վարդերի այգետարածքների ավելացման, եթերայուղերի արտադրության հեռանկարային զարգացման ծրագրի մշակման և իրականացման հարցով: Հայաստանում եթերայուղերի արտադրությամբ զբաղվում է

						<<Նաիրիան>> ընկերությունը, որը վերամշակում է սահմանափակ քանակություններ: Ներկայումս վարդերի արտադրության խթանումը կարող է խնդրահարույց լինել՝ պայմանավորված վերամշակող ընկերությունների սակավությամբ: Միաժամանակ պարզաբանվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը բանակցություններ է վարում եթերայուղերի արտադրությամբ զբաղվող ֆրանսիական <<Ման>> ընկերության հետ՝ Հայաստանում համատեղ ծրագիր իրականացնելու նպատակով: 2017 թվականի նոյեմբերի 23-ին ընկերության ներկայացուցիչներին ընդունել է ՀՀ գյուղատնտեսության նախարարը: Համագործակցության ուղղությամբ ձեռնարկվող քայլերի հաջողության դեպքում դիմումատուն կարող է մշակել ճյուղի զարգացման ծրագիր և համագործակցել ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ:
Բաղրամյան-Դալար-Բերքանուշ ճանապարհահատվածում անասունների տեղափոխման նպատակով ճանապարհի-կամուրջ կամ գետնուղի կառուցելու գործում օ-	1	1			1	ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից առաջարկվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Բաղրամյան-Դալար-Բերքանուշ հատվածում ճանապարհը հատող երթուղու /կամուրջ կամ գետնուղի/ կառուցման նպա-

ժանդակություն ցուցաբերելու մասին						տակահարմարության, առաջնահերթության, այլընտրանքային լուծման հնարավորության հարցերի վերաբերյալ ընդհանուր դիրքորոշում ներկայացնելու նպատակով տեղում կատարել ուսումնասիրություններ՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ու գյուղատնտեսության նախարարությունների, ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացուցիչների և շահառու համայնքների ղեկավարների մասնակցությամբ:
Ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	2	1			1	1 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 2018 թվականի մարտի 14-ի ԱՀ/ՌՆ-2/2192-18 գրությամբ դիմել է «Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ» բանկին ուսումնասիրելու և հնարավորության սահմաններում նրան վարկ տրամադրելու խնդրանքով: Միաժամանակ դիմումատուին ներկայացվել է բանկի գլխավոր գործադիր տնօրենի 2018 թվականի մարտի 26-ի պատասխան-գրությունը:

Գյուղմթերքի իրացման գործում օժանդակություն ցուցաբերելու նասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Տրակտոր ձեռք բերելու գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով՝ լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկա մատակարարելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի N 11 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել <<Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը>>, որի շրջանակներում գյուղատնտեսությունում տնտեսավարողները հնարավորություն ունեն ձեռք բերելու տարբեր մակնիշի տրակտորներ՝ 6 տարի մարման ժամկետով և լիզինգի տարեկան 9 տոկոսադրույքով, որի 7 տոկոսային կետը սուբսիդավորվում է պետության կողմից: Միաժամանակ պարզաբանվել է դիմումատուին, գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու պայմաններին մանրամասն կարելի է

						ծանոթանալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության www.minagro.am կայքում կամ դիմել ծրագրի մասնակից ֆինանսական կառույցներին՝ «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ, «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ, «Քարդ Ագրո-Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ, ինչպես նաև Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին:
Գետի հունը բարձրացնելու և համայնքի ոռոգման ջրի խնդիրը լուծելու մասին	1	1	1			
Խորքային հորերի կառուցման համար տրամադրված գումարի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	9	6	1		5	3 դիմում ընթացքի մեջ է:

2018 թվականի մարտ ամսվա ընթացքում կատարվել է քաղաքացիների 11 ընդունելություն, այդ թվում 3-ը մարմնի ղեկավարի կողմից

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Տրվել է Դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	Ծանոթություն
Գյուղատնտեսական վարկ տրամադրելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1				Քաղաքացուն պարզաբանվել է, ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագիրը, ինչպես նաև դրանից օգտվելու համար սահմանված պահանջները:
Գյուղտեխնիկայի ձեռքբերման պայմանները պարզաբանելու մասին	1	1			
Գյուղատնտեսության զարգացման նոր տեխնոլոգիայի՝ միկրոկլոնային բազմացման ներդրման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել ծախսերի հիմնավորված հաշվարկներով ծրագիր:
Հողատարածք ձեռք բերելու պայմանները պարզաբանելու մասին	1	1			
Պարարտանյութի միկրոփորձարկում կատարելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1			

Մեքենայացված եղանակով խաղողի այգեթաղ կատարելու գյուտի փորձարկման աշխատանքները կազմակերպելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1			
Գյուղացիական տնտեսություններում մոլախոտերի դեմ նոր պատրաստուկով պայքարի միջոցառումների ծրագիր իրականացնելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է ՀՀ գյուղատնտեության նախարարություն ներկայացնել ծախսերի հիմնավորված հաշվարկներով ծրագիր:
Աշխատանքի ընդունելու մասին	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, ըստ որի թափուր պաշտոններում նշանակվում են մրցութային կարգով և առաջարկվել է դիմումատուին հետևել «Հանրային ծառայություն» շաբաթաթերթին կամ քաղաքացիական ծառայության խորհրդի ինտերնետային կայքին, որտեղ տպագրվում են հանրապետությունում առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու վերաբերյալ հայտարարությունները:
Ընդամենը	8	4		4	
այդ թվում անձամբ մարմնի ղեկավարի կողմից կատարած ընդունելության արդյունքները					
Աշխատանքով ապահովելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է դիմել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պե-

					տական գործակալություն:
ՀՀ ԳՆ ՍԱՊԾ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության» ՊՈԱԿ-ում իր աշխատատեղը վերականգնելու հարցում օժանդակություն ցուցաբերելու և ֆերմերային տնտեսություններում նոր պատրաստուկների կիրառմամբ մոլախոտերի դեմ պայքարի ծրագիր իրականացնելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության հետ համատեղ սեղմ ժամկետում ներկայացնել հանրապետությունում բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման համալիր ծրագիր, որից հետո քաղաքացու հետ կքննարկվի համագործակցության հարցը:
Խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած կենդանիների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ նրա կողմից բարձրացված նույնաբովանդակ հարցին նախորդ ընդունելության ընթացքում տրվել է սպառիչ պատասխան:
Ընդամենը	3			3	